հարկ տալու պայմանով։ Այս բոլորը կատարեցաւ 19 թ. եւ Մուհառռամի՝ օրերից (հաշւած)՝ 20 թ. Իյադ նուաճեց Արզն[2] Մծբինի խաղաղութեան հիման վերայ եւ՝ անցնելով կիրճից՝ հասաւ Բիթլիս, եկաւ Խլաթ եւ հաշտութիւն կապեց քաղաքի իշխանի հետ։ Գալով Աղէ Ը-ր+, որ Հայաստանումն է, նա չ'անցաւ այն, այլ վերադարձաւ եւ դրեց Բիթլիսի տիրոջ վերայ նոյն հարկը, որ նա Խլաթի (բնակչաց), մեծամեծաց եւ իշխանի վերայ էր դրած։ Այստեղից Իյադ անցաւ Ռաքքայ, ապա Հիմս, ուր Նորան Օմար կառավարիչ նշանակեց. վախճանեցաւ 20 թ.

Միջագետոց սահմանագլուխը[3]։

Երբ Օսման Ի. Օֆֆան խալիֆ եղաւ (644—656), նա թուղթ դրեց Մուաւիային, որով Նորան կը նշանակէր կառավարիչ Ասորիքի, իսկ Օմայր Ի. Սադ Անսարիին՝ Միջագետոց վերայ. բայց ապա նա հեռացրեց վերջինիս եւ յանձնեց Մուաւիային Ասորիք եւ Միջագետք նոցա սահմանագլխով հանդերձ, հրամայելով Նորան յարձակիլ Աշմուշատի[4] վերայ, որ Չորրորդ Հայքումն է, եւ կամ յանձնարարել մէկին այդ գործը։

---

1 Մահմեդականաց տարւոյ առաջին ամիսն է։

2 Istaxri կ'անուանէ անպարիսպ քաղաք, որոյ արեւմտեան կողմումն մի հոյակապ ամրոց կայ, Սերբեռ գետի վերայ։ Carolus Müller (*Πτολεμαίου γεωγραφική*) կ'ենթադրէ հնոց Տիգրանակերտն (*Τιγρανόκερτα*, Ptol., Strabo, Steph. Byz., Dio Cass.; Tigranocerta, Tacitus, Plinius).

3 Հատուածս կը նկարագրէ Արաբացոց արշաւանքը դէպի Յունահայոց սահմանագլուխը եւ նոցա երկարամեայ ճակատը Յունաց հետ, որոնցից նոքա թափեցին առ ժամանակ Մալաթիայ, Աշմուշատ եւ Կամխ ամրոցը։ Կամխի վերայ տեղի ունեցած կռւի նկարագրութիւնն մենք կրճատեցինք։

4 Տե՛ս Աշմուշատի մասին ծանօթութիւնս էջ 26։